Գին 2400 բիւր կշիռ Աղի որ հատանի 'ի յերկրէ վարձիւ իւրով . .	240000
Ծախ տան տկարաց. . . .	100000
Ծախ դեղօրէից և վարձ բժշկաց .	100000
Ծախ տանց աղքատաց և տնանկաց .	100000
Ծախ ուսման որբ մանկանց . .	100000
Բոլոր տարեկան ծախն բովանդակի լաք ռուբլի . . .	12370020

1237 բիւր և 20 դահեկան երծաթ հայոց։

ԳԼՈՒԽ ՄՀԹ.

Ըստ Օրինաց հայաստանեաց հրամանովն նախարարին երիս խումբս զօրաց յանձնեսցի երիս գոյնաւոր սպարապետաց զի կառավարեսցի այր և ձին ասպետաց և հետևակաց և այր ձիաց համախոհ սպարապետաց հրամանաւ և բերանիւ նախարարին հնազանդ հրամանին տանուտերաց տանն հայոց։

ԳԼՈՒԽ ՄԶ.

Ամենայն գունդ զինուորաց 'ի ժամանակս պատերազմի ծանիցեն զօրագլուխս իւրեանց իբր նախարար, և ամենայն կուսակալք նորայ ըստ կարգի աստիճանին իւրեանց, երկրորդէ մինչև քանից երորդ որ լիցի անկանելով առաջինն 'ի տեղի նորայ ծանիցեն ամենեքեան երկրորդն